«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2013 - 2015

Դեկտեմբեր 2015թ.

- Ժիրայր Աղավելյանի ֆոտոարվեստը ներկայացնող «Վերադարձ» խորագրով ցուցահանդեսը եւ «Երեք հասակ» գիրք-ալբոմի շնորհանդեսը:

Նոյեմբեր 2015թ.

- «Անվճար դասագրքեր-2015/2016» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 279 անապահով աշակերտներին 4,173 դասագրքի տրամադրում:

- Երեւանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցի պատուհանների վերանորոգման աշխատանքներ:

- Տեխնիկական օժանդակություն Բերձորի թիվ 1 միջնակարգ դպրոցին:

Օգոստոս 2015թ.

- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

- «Ամառային ճամբար» ծրագրի վեցերորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 72 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հուլիս 2015թ.

- Ֆինանսական օժանդակություն Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցին:

- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

Հունիս 2015թ.

- «Ճապոնիա, Հնդկաստան, Եգիպտոս» մանկապատանեկան նկարչական ցուցահանդեսի հովանավորում:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:
- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, Մայր Հայաստան զինվորական թանգարան, Շուշի եւ Գանձասար: Ծրագրի շահառուներ՝ 100 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

Ապրիլ 2015թ.

- «Հիշողություն» խորագրով միջազգային լուսանկարչական ցուցահանդես:
- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 5-րդ օլիմպիադա», Հայաստանի եւ Արցախի հինգ Թեքեյան դպրոցների 80 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:
- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:
- Աջակցություն «Ինստիգեյթ դիզայն» ընկերության գործունեությանը:

Մարտ 2015թ.

- Ժիրայր Աղավելյանի հեղինակած «Ճակատագրի հետքերով» լուսանկարչական ցուցահանդես:

Փետրվար 2015թ.

- «Նեմեսիս գործողությունը. Սողոմոն Թեհլերյան» պատկերապատումներով գրքի շնորհանդես:
- Ռեժիսոր Ժիրայր Աղավելյանի ֆոտոարվեստը ներկայացնող «Տրամադրություն» խորագրով ցուցահանդես:

- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

Հունվար 2015թ.

- Տեխնիկական օժանդակություն Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցին:
- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

Հունվար - դեկտեմբեր 2015թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպություններին, այդ թվում ՀԹՄՄ:

Դեկտեմբեր, 2014թ.

- Ֆինանսական եւ տեխնիկական օժանդակություն Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցին:
- Ֆինանսական եւ տեխնիկական օժանդակություն ՀԹՄՄ:
- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

Նոյեմբեր, 2014թ.

- «Անվճար դասագրքեր-2014/2015» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի եւ Բերձորի՝ Վ. Թեքեյանի անվան դպրոցների 307 անապահով աշակերտներին 4,154 դասագրքի տրամադրում:
- «Օրինյալ ուղի. Մոսկվա-Երեւան» միջազգային լուսանկարչական ցուցահանդես:
- Աջակցություն «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի գործունեությանը:

Հոկտեմբեր, 2014թ.

- «Հայք» վերլուծական-տեղեկատվական կենտրոնի հիմնադրում եւ գործունեության հովանավորում:

Սեպտեմբեր, 2014թ.

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

- «Թեքեյանական մարզական խաղեր» երկօրյա մրցութային ծրագրի իրականացում Գյումրիում՝ Հայաստանի եւ Արցախի վեց դպրոցների 90 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում:

Օգոստոս, 2014թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի հինգերորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 70 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Մայիս, 2014թ.

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Գառնի, Գեղարդ, Ամարասի վանական համալիր: Ծրագրի շահառուներ՝ 120 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Ապրիլ, 2014թ.

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, անգլերեն լեզու, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 4-րդ օլիմպիադա», Հայաստանի եւ Արցախի հինգ Թեքեյան դպրոցների 85 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:

- Ֆինանսական օժանդակություն Բերձորի Վ. Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցին:

- Տեխնիկական օժանդակություն Երեւանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոցին:

Մարտ, 2014թ.

- Նկարիչ Հակոբ Անչարակյանի հեղինակած «Գարնանամուտ» գեղանկարչական ցուցահանդես:

Հունվար, 2014թ.

- «Պատուհան դեպի աշխարհ» միջազգային լուսանկարչական ցուցահանդես:

Հունվար – դեկտեմբեր, 2014թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպություններին, ինչպիսիք են ՀԹՄՄ, «Ոսկե ծիրան» կինոփառատոն, «Կարին» ազգագրական համույթ, Հայաստանի լուսանկարիչների միություն եւ այլն:

Նոյեմբեր, 2013թ.

- «Անվճար դասագրքեր-2013/2014» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի եւ Բերձորի՝ Վ. Թեքեյանի անվան դպրոցների 319 անապահով աշակերտներին 3,958 դասագրքի տրամադրում:

- Ֆինանսական աջակցություն ՀԲԸՄ-ին՝ սիրիահայերի համար մարդասիրական ծրագրեր իրականացնելու:

Հոկտեմբեր, 2013թ.

- Սիրիահայ անվանի լուսանկարիչ Վահե Շահինյանի հեղինակած «Սիրիան իմ հիշողություններում» խորագրով ցուցահանդես:

Հուլիս, 2013թ.

- Գյումրիի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցի ջեռուցման համակարգի ապահովման ծրագիր:

- Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի 10-ամյակի կապակցությամբ իրականացվող միջոցառումներին:

- «Ամառային ճամբար» ծրագրի չորրորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 74 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Վահագնաձորի «Գուգարք» ճամբարում:

Մայիս, 2013թ.

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ճանաչողական ծրագրի շրջանակում այցելություն Շուշիի թանգարաններ, Հառիճավանք, Անիի ավերակների ուսումնասիրում սահմանից: Ծրագրի շահառուներ՝ 85 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցներից:

- «Հայաստանն իմ աչքերով» լուսանկարչական ցուցահանդես:

- Ֆինանսական օժանդակություն Հայ-բրիտանական գործարարության պալատին տարեկան բարեգործական ծրագրեր իրականացնելու համար:

Ապրիլ, 2013թ.

- Վահան Թեքեյանի ծննդյան 135-ամյակին նվիրված ասմունքի մրցույթ-փառատոն՝ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի, Բերձորի՝ Վ. Թեքեյանի անվան դպրոցների, ինչպես նաեւ Երեւանի Կիլիկյան վարժարանի աշակերտների մասնակցությամբ:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Հունվար - դեկտեմբեր 2013թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպություններին, այդ թվում ՀԹՄՄ: